Քաղաքացիական Ծառայության Պաշտոնի Անձնագիր

27-33.6.1-Մ1-22 Գլխավոր մասնագետ(2026-01-19)

1. Ընդհանուր դրույթներ

1.1 Պաշտոնի Անվանում, Ծածկագիր

Ներքին գործերի նախարարություն | Հանցավորության վիճակագրության և հետազոտական կենտրոն | Վիճակագրության վերլուծության և հետազոտությունների բաժին | Գլխավոր մասնագետ, (27-33.6.1-Մ1-22)

1.2 Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3 Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր մասնագետներից մեկը:

1.4 Աշխատավայր

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Նալբանդյան 130:

---

2. Պաշտոնի բնութագիր

2.1 Աշխատանքի բնույթը (գործառույթներ), Իրավունքները, Պարտականությունները

1. իրականացնում է հանցավորության և վարչական իրավախախտումների վերաբերյալ պաշտոնական վիճակագրության արտադրության աշխատանքներ.
2. իրականացնում է պարբերական վիճակագրական հաշվետվությունների, տեղեկատվական բնույթի փաստաթղթերի, ամփոփ տեղեկանքների և թեմատիկ վիճակագրական ժողովածուների կազմման ու Նախարարությանը, Ոստիկանությանը և իրավասու այլ պետական մարմիններին դրանց տրամադրման աշխատանքներ.
3. իրականացնում է վիճակագրության և հաշվառված այլ տվյալների շարունակական, դինամիկ ու բազմաստիճան քրեաբանական վերլուծության աշխատանքները՝ վերլուծական և արհեստական բանականության գործիքների կիրառմամբ, ինչպես նաև ըստ անհրաժեշտության կամ առաջարկությունների հիման վրա թիրախային և թեմատիկ վերլուծությունների իրականացման աշխատանքները՝ հաշվի առնելով տարածքային, ժամանակային, ռիսկային խմբերի, հանցատեսակների և այլ համապատասխան դասակարգումները, ներառյալ՝ հանցավորության միտումների վերլուծությունը, ինչպես նաև հանցագործությունների աշխարհագրական քարտեզավորումն ու բարձր ռիսկայնության գոտիների հայտնաբերումը.
4. իրականացնում է զոհացման և այլ հարցումների անցկացման, դրանց արդյունքների ամփոփման աշխատանքներ.
5. իրականացնում է Նախարարության, Ոստիկանության կառուցվածքային ստորաբաժանումների և իրավասու այլ պետական մարմինների հետ տեղեկատվության փոխանակման, ինչպես նաև վերջիններիս հետ տեղեկատվության փոխանակման արդյունավետության բարձրացման նպատակով համագործակցության աշխատանքներ.
6. իրականացնում է իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին վիճակագրական տեղեկատվության տրամադրման աշխատանքներ՝ օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված դեպքերում ու կարգով.
7. իրականացնում է օրենքով սահմանված դեպքերում օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ տեղեկատվության փոխանակման աշխատանքներ, այդ թվում՝ օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկ հաշվառման ենթակա տեղեկատվության սահմանված ձևաչափով ու կարգով ներկայացման, ինչպես նաև օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների կողմից միջպետական ինֆորմացիոն բանկ ներկայացված տեղեկատվության սահմանված ձևաչափով ու կարգով հաշվառման ու Նախարարության ու Ոստիկանության համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումներին և օրենքով նախատեսված դեպքերում՝ իրավասու այլ պետական մարմիններին դրա տրամադրման աշխատանքներ.
8. իրականացնում է քրեաբանական, սոցիոլոգիական, վիճակագրական և միջդիսցիպլինար հետազոտությունների կազմակերպման ու իրականացման աշխատանքներ՝ կիրառելով քանակական և որակական հետազոտական մեթոդաբանություններ, ինչպես նաև գիտական ուսումնասիրությունների համար սահմանված այլ ընդունված մեթոդներ.
9. իրականացնում է հանցավորության կառուցվածքի, շարժընթացի, միտումների, տարածքային բաշխման, օրինաչափությունների, պատճառների, պայմանների ու նպաստող գործոնների ուսումնասիրություն.
10. իրականացնում է հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտում իրականացվող ծրագրերի և միջոցառումների ուսումնասիրման, դրանց արդյունավետության գնահատման ու բարելավման նպատակով առաջարկությունների ներկայացման աշխատանքներ.
11. իրականացնում է հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտին առնչվող իրավական ակտերի ու այլ նախագծերի ու առաջարկությունների ու ռազմավարական փաստաթղթերի ուսումնասիրման, Կենտրոնի լիազորությունների շրջանակներում դրանց մշակման աշխատանքներ.
12. իրականացնում է քաղաքականության մշակմանն ու որոշումների ընդունմանն աջակցող առաջարկությունների ու ուղղորդող նյութերի ՆԳ նախարարությանը և Ոստիկանության ստորաբաժանումներին և այլ պետական մարմիններին ներկայացնելու աշխատանքներ.
13. իրականացնում է թեմատիկ, նպատակային և հանցավորության տարբեր դրսևորումների վերաբերյալ համալիր հետազոտություններ կազմակերպման ու իրականացման աշխատանքներ.
14. իրականացնում է միջազգային լավագույն փորձի, առաջատար գիտական մոտեցումների ուսումնասիրություն, Կենտրոնի գործունեության հետ համեմատության ու համապատասխան բարելավումների իրականացման աշխատանքներ.
15. իրականացնում է Կենտրոնի կողմից իրականացվող հետազոտությունների մեթոդաբանական շրջանակի մշակման և անընդհատ կատարելագործման աշխատանքներ.
16. իրականացնում է հետազոտական աշխատանքների հրապարակման, արդյունքների հանրայնացման աշխատանքներ՝ զեկույցների, վերլուծական հոդվածների, գիտական հրապարակումների և այլ ձևաչափերով.
17. իրականացնում է գիտակրթական և գիտահետազոտական հաստատությունների, բուհերի, փորձագիտական կենտրոնների հետ համագործակցության աշխատանքներ՝ համատեղ հետազոտությունների իրականացման, փորձագիտական գիտելիքների փոխանակման և Կենտրոնի հետազոտական կարողությունների զարգացման նպատակով.
18. իրականացնում է ոչ ստանդարտ աճերի, նոր միտումների կամ ռիսկերի վաղ հայտնաբերման և համապատասխան կանխարգելիչ արձագանքի պլանավորումը ապահովելու նպատակով վիճակագրական վաղ զգուշացման համակարգերի կիրառման աշխատանքներ.

19. իրականացնում է հանցավորության վերաբերյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացման աշխատանքներ.
20. իրականացնում է հանցավորության առաջնային ռիսկերի ու սպառնալիքների բացահայտման, գնահատման և տարածական քարտեզագրման աշխատանքներ.
21. իրականացնում է հանցավորության հիմնական երկարաժամկետ սպառնալիքներիի գնահատման, դրա հիման վրա սպառնալիքների գնահատման զեկույցի մշակման աշխատանքները.
22. իրականացնում է Կենտրոնի իրավասության ոլորտին առնչվող քննարկումների, խորհրդակցությունների, միջոցառումների այլ աշխատանքային հանդիպումներին կազմակերպման աշխատանքներ.
23. իրականացնում է Բաժնի գործառույթներին վերաբերելի կառավարչական բնույթի հրամանների, ցուցումների և այլ նախագծերի մշակման և հաստատման ներկայացման աշխատանքներ.

Իրավունքները.

- պահանջել և ստանալ տեղեկատվություն, կատարել համապատասխան ճշգրտումներ հանցավորության և վարչական իրավախախտումների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն իրականացնելու նպատակով.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն վիճակագրության ու հաշվառված այլ տվյալների քրեաբանական վերլուծության իրականացման նպատակով.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն պարբերական վիճակագրական հաշվետվությունների, տեղեկատվական բնույթի փաստաթղթերի, ամփոփ տեղեկանքների և թեմատիկ վիճակագրական ժողովածուների կազմման նպատակով.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն հանցավորության վերաբերյալ կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ կանխատեսումների իրականացնելու, նպատակով.
- պահանջել և ստանալ տեղեկատվություն հանցավորության առաջնային ռիսկերի ու սպառնալիքների բացահայտում, գնահատում և տարածական քարտեզագրում իրականացնելու, սպառնալիքների գնահատման զեկույցի մշակման նպատակով.
- ստանալ լրացուցիչ տեղեկատվություն, նյութեր հաշվառման ներկայացված տվյալների վերաբերյալ Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումներից, Նախարարության ենթակա մարմիններից, տարբեր պետական մարմիններից և ծառայություններից, այդ թվում՝ պետական վիճակագրության ոլորտում լիազորված մարմնից, իրավապահ և դատական իշխանության մարմիններից,
- Բաժնի առջև դրված նպատակների և խնդիրների իրականացման նպատակով կարող է համագործակցել կրթական և գիտահետազոտական, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ:
- Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումներից, Նախարարության ենթակա մարմիններից, Կենտրոնի մյուս բաժիններից, այլ պետական մարմիններից պահանջել և ստանալ Բաժնի գործունեությանը վերաբերող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ տեղեկատվություն, նյութեր, կարծիքներ.
- ստանալ լրացուցիչ տեղեկատվություն Նախարարության ենթակա մարմինների, կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ոլորտի իրավասու այլ պետական մարմինների կողմից առաջարկված ծրագրում (այսուհետ՝ Ծրագիր) ներառվող ուղղությունների ու թեմաների վերաբերյալ.
- մասնակցել Կենտրոնի իրավասության ոլորտին առնչվող քննարկումներին, խորհրդակցություններին, միջոցառումներին և այլ հանդիպումներին.
- Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումներից, Նախարարության ենթակա մարմիններից, Կենտրոնի մյուս բաժիններից, Բաժնի մյուս աշխատողներից, այլ պետական մարմիններից և ծառայություններից պահանջել և ստանալ անհրաժեշտ տեղեկատվություն, փաստաթղթեր և նյութեր Բաժնի պետին հաշվետվություններ ներկայացնելու, տրված հանձնարարականների կատարման ընթացքի և արդյունքների վերաբերյալ զեկուցելու նպատակով:

Պարտականությունները.

- ուսումնասիրել ժամանակակից գործիքների կիրառումը, միջազգային փորձը Բաժնի կողմից իրականացվող վիճակագրությունների կազմման և քրեաբանական վերլուծությունների արդյունավետ իրականացման նպատակով.
- ուսումնասիրել միջազգային առաջավոր փորձը, առաջատար գիտական մոտեցումները, ամփոփել արդյունքները, հետազոտությունների նորագույն մեթոդների ներդրման վերաբերյալ, Բաժնի պետին ներկայացնել առաջարկություններ հետազոտական աշխատանքների և դրանց իրականացման մեթոդաբանության վերաբերյալ.
- հավաքագրել նյութեր և վերլուծել ստացված տեղեկատվությունը հանցավորության և վարչական իրավախախտումների վերաբերյալ պաշտոնական վիճակագրություն կազմելու նպատակով.
- ստուգել իրավասու մարմիններին, պաշտոնատար անձանց, իրավաբանական և ֆիզիկական անձանց, ինչպես նաև միջազգային կազմակերպություններին Բաժնի կողմից տրամադրվող վիճակագրական տեղեկատվությունը և ներկայացնել Բաժնի պետին.
- պարբերաբար ուսումնասիրել և վերլուծել հաշվառված տվյալները և կազմված վիճակագրությունները, ամփոփել անհրաժեշտ փաստաթղթերը, տեղեկատվությունը և ներկայացված առաջարկությունները, կատարել թիրախային ու թեմատիկ քրեաբանական վերլուծություններ.
- նախապատրաստել օտարերկրյա պետությունների իրավասու մարմինների և միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության արդյունքում անհրաժեշտ տեղեկատվության փոխանակման նյութեր, փաստաթղթեր,
- կազմել օտարերկրյա պետությունների իրավապահ մարմինների միջպետական ինֆորմացիոն բանկ հաշվառման ենթակա տեղեկատվությունը սահմանված ձևաչափին ու կարգին համապատասխան.
- ուսումնասիրել հանցավորության վերաբերյալ հավաքագրված տեղեկատվությունը, նյութերը, իրականացնել համալիր հետազոտություններ, կազմել հաշվետվություններ, տեղեկանքներ հանցավորության կառուցվածքի, շարժընթացի, միտումների, տարածքային բաշխման, օրինաչափությունների, պատճառների, պայմանների ու նպաստող գործոնների վերաբերյալ, ներկայացնել Բաժնի պետին.
- ամփոփել և վերլուծել հանցավորության վերաբերյալ կանխատեսումները, հանցավորության առաջնային ռիսկերը ու սպառնալիքները բացահայտելու, գնահատելու և տարածական քարտեզագրում իրականացնելու նպատակով ստացված և Բաժնի կողմից տիրապետվող տեղեկատվությունը, նյութերը, մշակել արդյունքների վերաբերյալ տեղեկանքներ, գրություններ և ներկայացնել Բաժնի պետին.
- նախապատրաստել հանցավորության ոչ ստանդարտ աճերի, նոր միտումների կամ ռիսկերի վաղ հայտնաբերման վերաբերյալ կազմված նյութերը և ներկայացնել Բաժնի պետին, ներկայացնել համապատասխան կանխարգելիչ միջոցառումների վերաբերյալ առաջարկություններ.
- ուսումնասիրել և վերլուծել հանցավորության կանխարգելման և դրա դեմ պայքարի ոլորտին առնչվող նախագծերի վերաբերյալ ստացված առաջարկությունները, ուսումնասիրել ռազմավարական փաստաթղթերը, ներկայացնել Բաժնի պետին առաջարկություններ այդ փաստաթղթերի մշակման գործընթացում.
- մշակել Կենտրոնի տարեկան Ծրագրում տարվա ընթացքում կատարման ենթակա նվազագույն վերլուծությունների ու հետազոտությունների ցանկը.
- նախապատրաստել Բաժնի գործառույթներին առնչվող հրամանների, որոշման նախագծեր, տեղեկանքներ, գրություններ, և այլ փաստաթղթեր, հավաքագրել նյութեր ոլորտին առնչվող տեղեկատվությունների փոխանակման աշխատանքների իրականացման նպատակով.
- Կենտրոնի իրավասության ոլորտին վերաբերյալ հանդես գալ մասնագիտական առաջարկություններով, խնդիրների և հարցերի վերաբերյալ ներկայացնել մասնագիտական լուծումներ
- համագործակցել Նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումների, Նախարարության ենթակա մարմինների, տարբեր պետական մարմինների և ծառայությունների, այդ թվում՝ պետական վիճակագրության ոլորտում լիազորված մարմնի, իրավապահ և դատական իշխանության մարմինների հետ:

3 Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1 Կրթություն, որակավորման աստիճանը

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

3.2 Մասնագիտական գիտելիքները

Ունի գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ:

3.3 Աշխատանքային ստաժ, աշխատանքի բնագավառում փորձը

Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ իրավունքի կամ սոցիոլոգիայի կամ տնտեսագիտության կամ մաթեմատիկայի բնագավառում՝ վիճակագրի կամ համակարգչային համակարգերի մշակման և վերլուծության բնագավառում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:

3.4 Անհրաժեշտ կոմպետենցիաներ

- ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ
  - Բարեվարքություն
  - Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
  - Ծրագրերի մշակում
  - Խնդրի լուծում
  - Հաշվետվությունների մշակում
- ԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ
  - Բանակցությունների վարում
  - Փոփոխությունների կառավարում
  - Տեղեկատվական տեխնոլոգիաներ և հեռահաղորդակցություն
  - Ժամանակի կառավարում
  - Փաստաթղթերի նախապատրաստում

---

4 Կազմակերպական շրջանակ

4.1 Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը

Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:

4.2 Որոշումներ կայացնելու լիազորությունները

Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:

4.3 Գործունեության ազդեցությունը

Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության համապետական ազդեցութ

4.4 Շփումները և ներկայացուցչությունը

Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի և այլ պետական մարմինների ներկայացուցիչների հետ, ինչպես նաև մասնակցում է տարբեր մարմինների ներկայացուցիչներից ձևավորված աշխատանքային խմբերի աշխատանքներին, միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ հանդիպումներին:

4.5 Խնդիրների բարդությունը և դրանց լուծումը

Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում համապատասխան մարմնի և կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: